Արձանագրության 3

«ԵՔ- ԳՀԱՊՁԲ-18/13» ծածկագրով գնանշման հարցման գնահատող հանձնաժողովի նիստի

ք. Երևան 25.12.2017թ.
Ժամը՝ 11:00

Մասնակցում էին
Հանձնաժողովի նախագահ՝ Ա.Մարտիրոսյան
Հանձնաժողովի անդամներ՝ Ս. Մաքսապետյան, Ա. Հազարապետյան, Հ.Հարությունյան, Գ. Հակոբյան
Հանձնաժողովի քարտուղար՝ Լ. Ղավալյան

1. ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե ներկայացված տեղեկատվության մասին

(Ա.Մարտիրոսյան)

1. Ընդունել ի գիտություն որ.

1.1 «Գնումների գործընթացի կազմակերպման մասին» ՀՀ կառավարության 526-Ն որոշմամբ հաստատված կարգի /այսուհետ՝ Կարգ/ 43-րդ կետի 3-րդ ենթակետի՝ հարցում էր ներկայացվել առաջին տեղ զբաղեցրած մասնակցի՝ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների առկայության վերաբերյալ:

1.2 ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի կողմից սահմանված ժամկետում ներկայացվել է տեղեկատվություն, համաձայն որի մասնակցը հայտը ներկայացնելու օրվա դրությամբ չունի ժամկետանց հարկային պարտավորություններ:

1.3 armeps համակարգի միջոցով առաջին տեղը զբաղեցրած մասնակցին ծանուցում է ուղարկվել, որը ծանուցումն ուղարկելու օրվանից երեք աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային փոստի միջոցով ներկայացրել է իր հայտով առաջարկված ապրանքների ամբողջական նկարագրերը (Հրավերի հավելված 6.1):

Ընդունվել է որոշում՝ կողմ - 5 դեմ - 0:

2. Գնանշման հարցում ընթացակարգի հայտերի գնահատման արդյունքների հաստատման մասին

(Ա.Մարտիրոսյան)

Հիմք ընդունելով սույն արձանագրության 1-ին կետը՝ հանձնաժողովը որոշեց հաստատել գնանշման հարցման ընթացակարգի առաջին տեղ զբաղեցրած մասնակցի հայտի գնահատման արդյունքները.

Մասնակցի անվանումը	Հայտի գնահատականը
«Հրաշք Այգի» ՍՊԸ	Բավարար

Ընդունվել է որոշում՝ կողմ - 5, դեմ - 0:

3. «ԵՔ- ԳՀԱՊՁԲ-18/13» ծածկագրով գնման ընթացակարգի ընտրված մասնակցի մասին

(Ա.Մարտիրոսյան)

Հիմք ընդունելով սույն արձանագրության 2-րդ կետով ընդունած որոշումը՝ **«ԵՔ-ԳՀԱՊՁԲ-18/13»** ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի ընտրված մասնակից հայտարարել «Հրաշք Այգի» ՍՊԸ -ին:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 5, դեմ - 0:

4. Գնման պայմանագիր կնքելու որոշում ընդունելու մասին

(Ա.Մարտիրոսյան)

4.1 Հիմք ընդունելով սույն արձանագրության 3-րդ կետով ընդունված որոշումը, ինչպես նաև Գնումների մասին» ՀՀ օրենքի 36-րդ հոդվածի 1-ին կետը՝

«ԵՔ-ԳՀԱՊՁԲ-18/13» ծածկագրով գնանշման արդյունքում պայմանագիր կնքելու առաջարկ ներկայացնել «Հրաշք Այգի» ՍՊԸ –ին:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 5, դեմ - 0:

5. Հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման ժամանակացույցը հաստատելու մասին

(Ա.Մարտիրոսյան)

- Գնանշման հարցման ընթացակարգի արդյունքների ամփոփման նպատակով հանձնաժողովի նիստ հրավիրել պայմանագիրը կնքվելու կամ ընթացակարգի արդյունքում պայմանագիր չկնքվելու դեպքում այդ հանգամանքը հայտնի դառնալու օրվան հաջորդող օրացուցային օրը ժամը 11:00-ին, Երևանի քաղաքապետարանի վարչական շենքում, հասցե՝ ք.Երևան, Արգիշտի փողոց 1:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 5, դեմ - 0:

Հանձնաժողովի Նախագահ՝		Ա.Մարտիրոսյան
Անդամներ՝		Ս. Մաքսապետյան
		Ա. Հազարապետյան
		Հ.Հարությունյան
		Գ. Հակոբյան
Համակարգող՝		Լ. Ղավալյան